ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

27 հունիսի ուրբաթ 2025
տպագրության ԺԴ տարի

86
(3117)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱԿԸ ԴԱՏԱՐԿ Է, ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ՝ ԼՈՒՌ

«Ժողովուրդ» օրաթերթը նկատել է, որ երեկ ՀՀ Կառավարության շենքի բակում անսովոր լռություն էր տիրում. նախկինում ակտիվ եւ խոսուն նախարարներն ու պաշտոնյաները կարծես «չքացել» էին: Տեղում լրագրողների հարցերին պատասխանելու փոխարեն՝նրանք խուսափում են ներքեւ իջնելուց:

Այս վարքագիծը, «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով, պայմանավորված է վարչապետ Նիկոլ Փաշինյանի, նրա կնոջ եւ թիմակիցների կողմից վերջին շրջանում արվող, հանրության շրջանում լուրջ դժգոհություն առաջացրած անպարկեշտ գրառումներով: Կառավարության շատ անդամներ չեն ցանկանում ներկայանալ հանրային հարթակներում կամ պատասխանել լրագրողների հարցերին: Նրանք իրենց մտերիմների շրջանում խոստովանում են՝ «այս ընթացքում պետք չէ երեւալ, քանի որ պատասխաններ պարզապես չունենք լրագրողների բազմապիսի հարցերին»:



Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր, նախկին լրագրող Սիսակ Գաբրիելյանի գործերը հեղափոխությունից հետո, կարծես, լավացել են: «Ժողովուրդ» օրաթերթը Սիսակ Գաբրիելյանի՝2024 թվականի անշարժ գույքի, եկամուտների, ծախսերի եւ շահերի հայտարարագրից տեղեկացավ, որ պատգամավորը հեղափոխությունից հետո ձեռք է բերել իր 2-րդ բնակարանը: Մինչ հեղափոխությունը Գաբրիելյանը ուներ համատեղ սեփականությամբ բնակարան Շենգավիթ վարչական շրջանում: 2018 թվականից, ինչպես շատ ՔՊ-ականներ, Գաբրիելյանը եւս դարձավ տան տեր: Սիսակ Գաբիելյանը նախորդ տարի գնել է իր 2-րդ բնակարանը: Նա 2021 թվականին անհատական բնակելի տուն է գնել Շիրակի մարզկենտրոն Գյումրի քաղաքում եւ հանդիսանում է այդ տան միանձնյա սեփականատերը: 2024 թվականին պատգամավորը գնել է եւս մեկ բնակարան Երեւանում, որն արժեցել է 22 մլն 969 հազար դրամ: Այսինքն՝նա ունի երեք բնակարան: «Ժողովուրդ» օրաթերթը 2022 թվականի տարեկան հայտարարագրից տեղեկացավ, որ պատգամավորը 2021 թվականին նաեւ ավտոմեքենա է գնել՝ 2018 թվականի արտադրության Hyundai մակնիշի: Նշված մեքենան 2023 թվականին վաճառել է 8 մլն դրամով եւ 12 մլն դրամով գնել է 2024 թվականի հայտարարագրում առկա VOLKSWAGEN մակնիշի մեքենան: Նրա բանկային հաշիվների մնացորդները կազմել են գրեթե 1,3 մլն դրամ, կանխիկ դրամական միջոցները կազմել են 800 հազար դրամ: Հաշվետու տարվա եկամուտները կազմել են 16 մլն 755 հազար դրամ, որից 12 մլն 209 հազար դրամն աշխատանքի վարձատրություն է Ազգային ժողովի աշխատակազմից, 720 հազարը վարձակալության դիմաց ստացված եկամուտ է, 1 մլն 555 հազարը եկամտահարկի վերադարձ է ՀՀ ՊԵԿ-ից, իսկ 2 մլն 270 հազար դրամը վարկ է «ՎՏԲ Հայաստան» բանկից:

Ազգային ժողովի պաշտոնական կայքէջում արդեն հրապարակվել է ՀԷՑ-ը ազգայնացնելու, ինչպես համացանցում որակվել է՝ «ՀԷՑ-ը խլելու» օրենսդրական նախագիծը: Այս նախագիծը Ազգային ժողովում կքննարկվի հուլիսի 1-4-ը գումարվող արտահերթ նստաշրջանում: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ այս նախագիծը մշակել եւ օրակարգ են բերել ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամները: Այն վերաբերում է ընդհանուր էներգետիկ ոլորտի ենթակառուցվածքներին, այդ թվում՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին, որի պետականացման գործընթացի մասին հայտարարել է վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Այսպես՝նախագծի փաթեթով «Էներգետիկայի մասին» օրենքում փոփոխություն եւ լրացում կատարելու միջոցով առաջարկվում է նախատեսել Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահի լիազորությունը՝ նշանակելու ՀԷՑ-ի ժամանակավոր կառավարիչ, ում անցնելու են ՀԷՑ-ը կառավարելու բոլոր լիազորությունները: «Կարծում եմ՝հասունացել է պահը, երբ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն պետք է ազգայնացվի (պետականացվի)»,- այս մասին հայտարարել էր Նիկոլ Փաշինյանը: Նրա խոսքով՝ դա տեղի կունենա արագ: Հիշեցնենք, որ այս հայտարարությունը Փաշինյանն արեց միլիարդատեր, գործարար Սամվել Կարապետյանի տան խուզարկությունից ժամեր անց, իսկ այս հայտարարությունից հետո դրա ներկայացումը չուշացավ: Խորհրդարանում լրագրողների հետ զրույցում էլ Փաշինյանը նշել էր, թե «Ազգային ժողովում արդեն կա ՀԷՑ-ն ազգայնացնելու եւ կից օրենքներում փոփոխությունների նախագիծ»:

Վերջերս հրապարակված լուսանկարը, որտեղ պատկերված էին Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը եւ Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը, լուռ բայց հստակ մեսիջ էր հանրությանը: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ այդ հանդիպումը ուղեկցվել է լուրջ եւ խորքային զրույցով՝երկրի ներքաղաքական լարված իրավիճակի եւ եկեղեցու՝որպես ինստիտուտի դերի վերաբերյալ: Ըստ «Ժողովուրդ» օրաթերթի լավատեղյակ աղբյուրների՝Տեր-Պետրոսյանն իր խոսքում մտահոգություն է հայտնել եւ կոչ արել կաթողիկոսին պահպանել հանգստություն, զգոնություն եւ չտրվել որեւէ սադրանքի: Նա ընդգծել է, որ որեւէ իշխանություն իրավունք չունի ներխուժել Եկեղեցու ինքնիշխանության դաշտ ու թելադրել իր կամքը՝հիշեցնելով, որ ՀՀ Սահմանադրության համաձայն՝Եկեղեցին գործում է պետությունից անջատ: Կաթողիկոսը իր հերթին տեղեկացրել է ՀՀ հիմնադիր նախագահին, որ վերջին շրջանում տարբեր ուղղություններով անընդհատ զգուշացումներ ու սպառնալիքներ է ստանում: Նրան փորձել են համոզել հեռանալ, հակառակ դեպքում՝խոստացել են վարկաբեկել կամ նույնիսկ ձերբակալել: Սակայն հոգեւոր հովիվը այս պահին շարունակում է դիմադրել:



ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՀԵՂԱՇՐՋՄԱՆ» ՊԼԱՆԻ ՀԵՏ ԿԱՊ ՉՈՒՆԻ

«Ես արդեն մեկ տարուց ավելի է, ինչ որևէ աղերս չունեմ «Սրբազան պայքարի» և նրա մասնակիցների հետ: Այն մարդիկ, որոնք փորձում են ամեն ինչի համար ինձ մեղադրել, կա՛մ հոգեկան շեղում ունեն, կա՛մ էլ անբարոյական են: Նրանք տաղալել են պայքարը և ամեն կերպ փորձում են մեղավորներ փնտրել: Ե՞ս եմ շարժումը տաղալել, ե՞ս եմ մարդկանց տուն ճանապարհել, թե՞ ես եմ խորհրդարանական ընդդիմության հետ երկխոսության մեջ մտել: Եթե իմ նկատմամբ անհիմն մեղադրանքները շարունակվեն, ապա ես դատական եմ դիմելու», - ArmLur.am-ի հետ զրույցում ասաց քաղաքագետ Սուրեն Պետրոսյանը:

-Պարոն Պետրոսյան, Ազգային անվտանգության ծառայությունը խուզարկություններ անցկացրեց «Սրբազան շարժման» առաջնորդների ու մասնակիցների տներում, այդ թվում՝ Բագրատ սրբազանի: Հայտնաբերեցին թղթեր, զենք-զինամթերք եւ երկրում հեղաշրջում անելու ծրագիր: Ձեր անունը եւս նշում են, ասում են՝ Դուք եք այդ ծրագիրը փոխանցել իշխանություններին, ի՞նչ կասեք այս ամենի վերաբերյալ:

-Ես այս թեմային անդրադարձել եմ եւ նորից ասեմ. նման խոսակցություններ տարածելու համար առնվազն պետք է լինել հոգեկան շեղում ունեցող մարդ կամ անբարոյական: Եթե այս ամենը մի փոքր էլ շարունակվի, ես անպայմանորեն դատական հայցով կդիմեմ դատարան:

Ես մեկ տարուց ավելի է որեւէ անգամ անուղղակի կերպով կապ չեմ ունեցել ո՛չ շարժման, ո՛չ ակցիայի անդամներից որեւէ մեկի հետ, ո՛չ էլ ընդհանրապես դրա ցանկությունն եմ ունեցել: Որեւիցե կերպ չե՞ն կարողանում իմ շողքից դուրս գալ: Մեկ տարի է անցել, բայց դարձյալ Պետրոսյան Սուրենն է մեղավոր համարվում. թե ինչն է խնդիրը, չեմ հասկանում:

-Պարոն Պետրոսյան, իսկ այն հանգամանքը, որ փաստաթղթի վրա 2024 թվական է նշված, կասկածի տեղիք չի՞ տալիս: Այն իմաստով, որ Դուք մասնակցություն կարող էիք ունենալ այդ պլանը կազմելու գործընթացում:

-Երբ ես այնտեղ եմ եղել՝ շարժման գործընթացներում, ո՛չ նման պլան է եղել, ո՛չ՝ նման խոսակցություն: Ու այն թեզը, թե իբր ես շարժում եմ պառակտել, ամենամեծ անբարոյականությունն է: Ես դուրս եմ եկել շարժումից հունիսի 17-ին: Մայիսի 9-ը կար, մայիսի 10, մայիսի 26, հունիսի 9.... Ակցիաների այդ ընթացքում ո՞վ շարժմանն աջակցող մարդկանց «ուղարկեց տուն»: Ե՞ս եմ շարժում պառակտել, ե՞ս եմ մարդկանց տուն ուղարկել, ե՞ս եմ այդքան մարդու հանել փողոց, հետո՝ 1-2 օրվա ընթացքում, ճանապարհել տուն:

Ես պարզապես հավատարիմ եմ մնացել իմ սկզբունքերին, ասել եմ՝ եթե պառլամենտական ընդդիմությունից որեւէ մեկը խառնվի շարժմանը, ես որեւիցե պրոցեսի մասնակից չեմ լինելու: Շարժումը ընտրեց ոչ թե ժողովրդին, այլ պառլամենտական ընդդիմությանը: Վերջ: Սա է ամբողջ խնդիրը: Մնացածն ինձ ընդհանրապես չի հետաքրքրում:

Մտահոգ անձինք թող լսեն 2024 թվականի սեպտեմբերի 3-ի իմ հարցազրույցը Պետրոս Ղազարյանի մոտ եւ կհամոզվեն՝ իմ ասած յուրաքանչյուր կանխատեսում կատարվե՞լ է, թե՞ ոչ: Ես ասում էի, թե ինչ խնդիրներ են լուծվում այնտեղ: Ինչ ուզում են հիմա ասեն՝ միեւնույնն է, հիմա մարդիկ այնքան իմաստուն են, որ աստիճանաբար ամեն ինչ պարզ է դառնում:

Զրուցեց ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ԱՆՑՈՒԴԱՐՁ

ՎԱՐՉԱՊԵՏԸ ՇՆՈՐՀԱԿԱԼ Է ԹՐԱՄՓԻՆ

Իսրայելի վարչապետ Բենիամին Նեթանյահուն շնորհակալություն է հայտնել ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփին իր նախորդ հայտարարության համար, որում նա գովաբանել է Իսրայելի առաջնորդի գործողություններն Իրանի դեմ եւ կոչ է արել չեղարկել վարչապետի կոռուպցիայի գործով դատավարությունը, հաղորդում է Times of Israel-ը: «Շնորհակալություն, նախագահ Թրամփ, ինձ եւ Իսրայելին ու հրեա ժողովրդին ցուցաբերած հուզիչ աջակցության համար: Մենք կշարունակենք համատեղ աշխատել՝ մեր ընդհանուր թշնամիներին հաղթելու, մեր պատանդներին ազատելու եւ խաղաղության շրջանակն արագ ընդլայնելու համար», - գրել է Նեթանյահուն՝ X սոցիալական ցանցում՝ հրապարակելով Թրամփի պահանջը՝ անհապաղ դադարեցնել «Բիբիի» դատավարությունը: Ավելի վաղ, Թրամփը Նեթանյահուի դատավարությունն անվանել էր «քաղաքականապես դրդապատճառներով» եւ «կախարդների որս» եւ ասել, որ այն «պետք է անհապաղ չեղարկվի»: Թրամփն Իսրայելի վարչապետին անվանել էր «զինվոր»: Ինչպես նշել են իսրայելական լրատվամիջոցները, ԱՄՆ նախագահի այս հրապարակումը գովաբանվել է կառավարության կողմից, սակայն ընդդիմությունը խստորեն քննադատել է Թրամփին երկրի ներքին գործերին միջամտելու համար:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԴԱՏԱԽԱԶԸ ԿԴԻՄԻ ԱԺ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Չի բացառվում, որ առաջիկայում ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը դիմում ներկայացնի ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանին՝ միջնորդելով, որ խորհրդարանը թույլ տա քրեական գործ հարուցել ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արթուր Սարգսյանի նկատմամբ: Նշենք, որ ՀՀ քննչական կոմիտեն համատարած խուզարկություններ էր սկսել «Սրբազան պայքար»-ի մասնակիցների տներում, ինչի արդյունքում 10-ից ավելի անձ ձերբակալվեց, եւ, ըստ պաշտոնական թվերի, այս պահին կալանավորվել է 15 անձ: Ըստ նախաքննական մարմնի՝ շարժման մասնակիցները եւ ղեկավարները պլանավորել էին ՀՀ-ում իրականացնել ահաբեկչական եւ իշխանությունը զավթելուն ուղղված գործողություններ: Այս քրեական վարույթի շրջանակներում խուզարկել են ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արթուր Սարգսյանի տունը, ու չի բացառվում՝ հաշվի առնելով, որ նա «Սրբազան պայքար»-ի առաջնորդներից է, գլխավոր դատախազն անձամբ գնա Արթուր Սարգսյանի հետեւից:

ArmLur.am-ը դիմեց Գլխավոր դատախազություն՝ հասկանալու համար՝ արդյոք նման գործընթաց սկսել է գլխավոր դատախազը, ի պատասխան հայտնեցին՝ «չենք մեկնաբանում»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՄԵԾ ՔԱՆԱԿԻ ՏԱՐԱՆՑԻԿ ՉՎԵՐԹՆԵՐ ԵՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ

Հունիսի 12-ի լույս 13-ի գիշերը մեկնարկած եւ 12 օր տեւած Իսրայել-Իրան պատերազմի ընթացքում Հայաստանի օդային տարածքով աննախադեպ մեծ թվով տարանցիկ չվերթներ են իրականացվել: Քաղավիացիայի կոմիտեի փոխանցմամբ՝ Իրանի Իսլամական Հանրապետության օդային տարածքի փակման հետեւանքով հունիսի 12-ից մինչեւ հունիսի 20-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ օդային տարածքից օգտվել է շուրջ 134 ավիաընկերություն, որոնց կողմից իրականացվել է ընդհանուր առմամբ 2949 տարանցիկ չվերթ: Կոմիտեից միաժամանակ տեղեկացրել են, որ ՀՀ օդային տարածքով իրականացված տարանցիկ չվերթների շրջանակներում նոր ուղղություններ չեն արձանագրվել, կատարվել են միայն ուղղությունների փոփոխություններ:

Նշենք, որ պատերազմի մեկնարկին երկու երկրները փակել էին իրենց երկրների օդային տարածքները, ինչի հետեւանքով բազմաթիվ ավիաընկերություններ փոխել էին չվերթների ուղղությունները: Այժմ Իսրայելը եւ Իրանը մասամբ բացել են իրենց երկրների օդային տարածքները եւ թույլատրում են միջազգային եւ ներքին չվերթներ իրականացնել:

ՔԱՂՑԿԵՂՈՎ ՀԻՎԱՆԴ ԱԿՏԻՎԻՍՏԻՆ ԿԱԼԱՆԱՎՈՐԵԼ ԵՆ

Երեկ՝ երեկոյան, ոստիկանության կողմից ձերբակալված եւ մինչ այս պահը անազատության մեջ գտնվող քաղաքացիների շարքում է նաեւ քաղաքացիական ակտիվիստ Աղվան Արշակյանը: Նրան մեղադրում են ապօրինի զենք պահելու կասկածանքով: Սակայն նույնիսկ խուզարկության արդյունքում իրավապահները նրա մոտ որեւէ զենք կամ զինամթերք չեն հայտնաբերել: Այնուամենայնիվ, Աղվան Արշակյանը շարունակում է մնալ կալանքի տակ: Սա առաջին դեպքը չէ: Դեռեւս 2024 թվականի հոկտեմբերից սկսած, Աղվան Արշակյանը մի քանի անգամ դարձել է ապօրինի ձերբակալությունների եւ անհիմն մեղադրանքների թիրախ:

Աղվան Արշակյանի կալանավորման վերաբերյալ առավել մտահոգիչ հանգամանքը նրա առողջական վիճակն է: Ակտիվիստը քաղցկեղով է հիվանդ եւ կարիք ունի շարունակական բժշկական վերահսկողության: Իրավապաշտպանները ահազանգում են, որ այս պայմաններում նրա կալանավորումը լուրջ վտանգ է ներկայացնում նրա կյանքի համար:

Արշակյանի հարազատները եւ ընկերները պնդում են՝ սա ոչ թե իրավական գործընթաց է, այլ քաղաքական հաշվեհարդար՝ ընդդիմադիր գործունեության համար:

ԴԱՐՁՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Ադրբեջանի նախագահի հատուկ հանձնարարություններով ներկայացուցիչ Էլչին Ամիրբայովը կոչ է արել Հայաստանին իրականացնել 2020 թվականի զինադադարի պայմանագրի դրույթները՝ մասնավորապես Զանգեզուրի միջանցքին վերաբերող:

El Mundo-ին տված հարցազրույցում Ամիրբայովն ընդգծել է, որ Հայաստանի կողմից համաձայնագրի պահպանումը կարեւոր է տարածաշրջանային կապերի եւ տնտեսական ինտեգրման համար: «Մենք Հայաստանից ուզում ենք, որ իրականացնի 2020 թվականին ստանձնած պարտավորությունները», - ասել է Ամիրբայովը: Նա նշել է, որ համաձայնագրի հիմնական դրույթներից մեկը Զանգեզուրի միջանցքով Ադրբեջանի արեւմտյան շրջանների եւ Նախիջեւանի Ինքնավար Հանրապետության միջեւ անարգել հաղորդակցության ապահովումն է:

«Անարգել հաղորդակցություն նշանակում է, որ Զանգեզուրի միջանցքի 43 կիլոմետրի երկայնքով՝ Ադրբեջանի մի մասից մյուսը, չպետք է լինի որեւէ խոչընդոտ», - բացատրել է նա:

Ամիրբայովի խոսքով՝ Հայաստանի ներկայիս աշխարհաքաղաքական մեկուսացումը պետք է խթանի համաձայնագրի կատարումը:

«Հայաստանը ներկայումս լիովին մեկուսացված է: Բոլոր կարեւոր ենթակառուցվածքները՝ նավթամուղները, երկաթուղիները, շրջանցում են Հայաստանը», - ասել է նա: «Հայաստանի սահմանները Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ փակ են: Միայն Իրանի եւ Վրաստանի հետ սահմաններն են բաց»:

Նա ընդգծել է, որ իր պարտավորությունները կատարելով՝ Հայաստանը կարող է նոր հնարավորություններ բացել տնտեսական համագործակցության եւ տարածաշրջանային կապերի համար:

«Հայաստանը կարող է վերջ դնել իր մեկուսացմանը տարածաշրջանում: Եթե հարգի համաձայնագրերը, կարող է դառնալ տարանցիկ երկիր արեւելքից արեւմուտք եւ արեւմուտքից արեւելք ապրանքների հոսքերի եւ երթուղիների համար», - եզրափակել է Ամիրբայովը:

ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԿԳՈՒՄԱՐՎԻ

Կառավարությունն Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան գումարելու մասին որոշում է կայացրել: Այս որոշմամբ ԱԺ-ին առաջարկվում է հուլիսի 1-ին՝ ժամը 11:00-ին, գումարել Ազգային ժողովի արտահերթ նստաշրջան՝նախաձեռնողի սահմանած օրակարգով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նստաշրջանը ավարտվել է եւ օրակարգում ներառված հարցերը ժամանակի սղության պատճառով չեն քննարկվել, անհրաժեշտություն է առաջացել դրանք քննարկել արտահերթ նստաշրջանի ընթացքում: Օրակարգում ներառվել են նաեւ հունիսի 17-ի հերթական նիստերի օրակարգում ներառված եւ չքննարկված երկրորդ ընթերցման նախագծեր եւ համաձայնագրեր:

ԱՆԴՐԱԴԱՐՁ

ԽՈՍԵԼ Է ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻՑ

Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը ՆԱՏՕ-ի գագաթնաժողովից վերադառնալուց հետո դատապարտել է լրագրողների հարցերին եւ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի ու Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի հետ հանդիպումներից մանրամասներ է ներկայացրել: Այդ մասին հայտնում է «Անադոլու» լրատվական գործակալությունը: Էրդողանի խոսքով՝ Դոնալդ Թրամփի հետ բանակցությունների ընթացքում քննարկվել են երկկողմ հարաբերությունները, ՆԱՏՕ-ի շրջանակներում գործընկերությունը, տարածաշրջանային եւ միջազգային հարցեր:

Նա հայտնել է, որ իր ամերիկացի գործընկերոջը փոխանցել է իր այն սպասումը, որ Թրամփը ջանքեր կգործադրի Գազայի եւ Ուկրաինայի հակամարտությունները դադարեցնելու համար, ինչպես արել է Իսրայելի եւ Իրանի միջեւ հրադադարի հասնելու ուղղությամբ: Էրդողանը նշել է, որ Սպիտակ տան ղեկավարի հետ քննարկել է Անկարային հինգերորդ սերնդի F-35 կործանիչներ մատակարարելու հարցը եւ հավելել է, որ կողմերի միջեւ այս թեմայով տեխնիկական խորհրդակցություններն արդեն սկսվել են: «Անկարան չի հրաժարվել F-35-ի ծրագրին մասնակցելուց, մենք մեր գործընկերների հետ քննարկում ենք նախագծին վերադառնալու մտադրությունը», - նշել է Թուրքիայի նախագահը:

Էրդողանը նաեւ հայտնել է, որ տարածաշրջանային հարցերի, մասնավորապես՝ Սիրիայի վերաբերյալ Անկարայի մտահոգությունները բոլոր մակարդակներում հստակորեն փոխանցվել են ամերիկյան կողմին: Անդրադառնալով երկրի պաշտպանունակության ամրապնդմանը՝ նա նշել է, որ Թուրքիան մտադիր է մեծացնել իր հրթիռային ներուժը՝ որպես իր ՀՕՊ համակարգերի զարգացման մաս: Մեկնաբանելով Իրանի կողմից Հորմուզի նեղուցի հնարավոր փակման հետեւանքներին՝Էրդողանը զգուշացրել է, որ դա կառաջացնի լայնածավալ խնդիրներ եւ շեշտել, որ Անկարան հույս ունի, որ Թեհրանը նման քայլ չի ձեռնարկի: Թուրքիայի նախագահը հավելել է՝ չնայած տարածաշրջանում վերջին իրադարձություններին՝ դեպի Թուրքիա իրանական գազի անխափան մատակարարումները չեն ընդհատվել: Էրդողանը հայտարարել է Ռուսաստանի եւ Ուկրաինայի միջեւ հակամարտության արագ ավարտի անհրաժեշտության մասին՝ արդար եւ երկարատեւ խաղաղության հիման վրա եւ շեշտել, որ առկա իրավիճակի պահպանումն այլեւս անտանելի է տարածաշրջանի համար: Նախագահ Էրդողանը հայտարարել է, որ ՆԱՏՕ-ի գագաթնաժողովի շրջանակներում կայացած հանդիպման ժամանակ իր ֆրանսիացի գործընկեր Էմանուել Մակրոնը հայտնել է Իսրայելի հետ Գազայի իրավիճակը առանձին քննարկելու մտադրության մասին: «Մենք շնորհակալ կլինենք նրան այս քայլի համար», - ասել է Թուրքիայի նախագահը:

ՄՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԴՈՒՐՍԳՐՈՒՄԸ ՀԵՏԱՁԳՎԵՑ

Հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղերի՝ էլեկտրոնային դեղատոմսերով դուրսգրումը կարճ ժամանակով հետաձգվեց, այն կգործի 2025 թվականի սեպտեմբերի 1-ից: Համապատասխան որոշումն ընդունվեց կառավարության երեկվա նիստին:

Որոշման մեջ նշվում է, որ դա պայմանավորված է ներկայումս առաջացած մի շարք խնդիրներով եւ էլեկտրոնային դեղատոմսերի գրման, բաց թողնման կարգի աստիճանաբար ներդնելու անհրաժեշտությամբ: Նախագծի ընդունմամբ ակնկալվում է նվազեցնել նոր կարգավորումների արդյունքում բնակչության հնարավոր անհարմարությունները եւ բժիշկների ծանրաբեռնվածությունը:

ԽՈՒԶԱՐԿԵԼ ԵՆ

Լիբանանահայ նախկին նախարար Ջորջ Փուչիկյանի բնակարանում երեկ երկրի իրավապահները խուզարկություն են կատարել, գրում է «Արեւելքը»: Հաղորդվում է, որ խուզարկություններ են կատարվել նաեւ Փուչիկյանի ղեկավարած Ճարտարարվեստի եւ արդյունաբերության նախարարության կարեւոր պաշտոնյաների բնակարաններում: Իրավապահների ուշադրության կենտրոնում է նաեւ նախկին նախարարի գրասենյակի պատասխանատու Լեւոն Քյուրիմյանը: Փուչիկյանը նաեւ հարցաքննության է կանչվել, բայց առողջական խնդրի պատճառով չի ներկայացել: Առաջիկա շաբաթ այս թղթածրարի առթիվ կարեւոր զարգացումներ են սպասվում:

11 ԴԵՊՔ

Հիվանդությունների վերահսկման եւ կանխարգելման ազգային կենտրոնը տեղեկացնում է, որ վերջին 14 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է Կորոնավիրուսային հիվանդության 11 դեպք, ինչը նախորդ 14 օրվա համեմատ նվազել է 2 դեպքով: Թեստավորման դրական արդյունքների մասնաբաժինը վերջին 14 օրվա ընթացքում կազմել է 11%:

ՆՈՐՄԱՅԻՑ ԲԱՐՁՐ

Հանրապետությունում այսօր՝ հունիսի 27-ի ցերեկն ուլտրամանուշակագույն ճառագայթման ինդեքսը սպասվում է նորմայից բարձր: Հորդորում ենք 11:00-17:00 խուսափել արեւի ուղիղ ճառագայթներից: Այս մասին հայտնում են «Հիդրոօդերեւութաբանության եւ մոնիթորինգի կենտրոն»-ից: Երեւանում հունիսի 27-ին սպասվում է առանց տեղումների եղանակ: Հունիսի 28-ին ուշ երեկոյան, 29-30-ին, հուլիսի 1-ին գիշերը եւ երեկոյան ժամերին քաղաքի առանձին հատվածներում հնարավոր է կարճատեւ անձրեւ եւ ամպրոպ: Օդի ջերմաստիճանը հունիսի 27-28-ին աստիճանաբար կբարձրանա 2-4 աստիճանով:

ԹԱՔՑՆՈՒՄ ԵՆ 400 ԿԳ ՈՒՐԱՆԸ

Ատոմային էներգիայի միջազգային գործակալությունը չգիտի, թե որտեղ է Իրանը թաքցրել մինչեւ 60 տոկոս հարստացված 400 կգ ուրանը՝ հայտարարել է Գործակալության գլխավոր տնօրեն Ռաֆայել Գրոսսին: Նրա խոսքով՝ չնայած ռազմական գործողություններին՝Թեհրանը պարտավոր է գործակալության տեսուչներին ցույց տալ, թե որտեղ է գտնվում հարստացված ուրանը: Գրոսսին մեկնաբանել է ԱԷՄԳ-ի հետ համագործակցությունը ժամանակավորապես դադարեցնելու մասին Իրանի խորհրդարանի որոշումը: «Դա իրավական պարտավորություն է: Քանի դեռ Իրանը մնում է Միջուկային զենքի չտարածման պայմանագրի կողմ, Ատոմային էներգիայի միջազգային գործակալության հետ համագործակցությունը Թեհրանի պարտավորությունն է, եւ այն ուժի մեջ է»,- նշել է պաշտոնյան:

ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ՄԻԳՐԱՑԻԱ

ՀԻՎԱՆԴԱՆՈՑԻ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂԸ՝ ՄԵՂԱԴՐՅԱԼ

Հակակոռուպցիոն դատարան է ուղարկվել նոր քրեական գործ, որը վերաբերում է անօրինական միգրացիային:

Գոհար Հովհաննեսի Կարապետյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոնի բժշկուհի եւ իր հորաքրոջ դուստր Արփիկ Հարությունյանի եւ իր մտերիմ Լուսինե Մանուկյանի հետ նախնական համաձայնությամբ, խմբի կազմում, շահադիտական նպատակով իր եղբայր Միսակ Կարապետյանի կողմից, նյութապես շահագրգռելու եղանակով դրսեւորված դրդչությամբ, 1.200 ԱՄՆ դոլարի դիմաց 2024 թվականի հունիսին կազմակերպել է Միսակ Կարապետյանի որդու՝ Հովհաննես Կարապետյանի անօրինական միգրացիան:

Միսակ Հովհաննեսի Կարապետյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, նյութապես շահագրգռելու եղանակով, դրդել է Գոհար Հովհաննեսի Կարապետյանին նախնական համաձայնությամբ, խմբի կազմում, շահադիտական նպատակով՝ 1.200 ԱՄՆ դոլարի դիմաց, 2024 թվականի հունիսին կազմակերպելու անօրինական հիմունքներով Ամերիկայի Միացյալ Նահանգներում գտնվող իր որդու՝ Հովհաննես Միսակի Կարապետյանի անօրինական միգրացիան: Միսակ Կարապետյանը, ցանկանալով իր որդու՝ Հովհաննես Կարապետյանի օտարերկրյա պետությունում գտնվելու թույլտվություն ստանալու համար ձեռք բերել կեղծ փաստաթղթեր, դիմել է Գոհար Կարապետյանին՝ հիշյալ գործընթացը կազմակերպելու նպատակով, որի համար նրան տվել է 1.200 ԱՄՆ դոլար: Նշված գործընթացի իրականացման համար «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոնի բժշկուհի Արփիկ Սերյոժայի Հարությունյանը, նախնական համաձայնությամբ խմբի կազմում, կազմել է Հովհաննես Կարապետյանին իբրեւ բռնության ենթարկելու արդյունքում միջին ծանրության մարմնական բազմաթիվ վնասվածքներ ստանալու, ինչպես նաեւ իբրեւ 5 օր «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոնում ստացիոնար բժշկական օգնություն ստանալու վերաբերյալ բովանդակությամբ կեղծ փաստաթղթեր եւ փոխանցել Գոհար Կարապետյանին:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԶԻՆԱՄԹԵՐՔ ԵՆ ԳՏԵԼ

ՆԳՆ ոստիկանության ծառայողների՝ ապօրինի պահվող զենք-զինամթերքը կամավոր հանձնելու ուղղությամբ բացատրական աշխատանքները շարունակում են դրական արդյունք տալ: Հերթական դեպքն արձանագրվել է հունիսի 24-ին՝ Համայնքային ոստիկանության Մասիսի բաժնում: Անհայտ քաղաքացին հայտնել էր, որ Նոր Խարբերդ գյուղի մատուռի մոտ զենք-զինամթերք է թողել: Համայնքային ոստիկանության Մասիսի բաժնի ծառայողները նշված վայրում հայտնաբերել են ինքնաձիգ, հրացան, 5,45 տրամաչափի 18 փամփուշտով լիցքավորված պահեստատուփ, Ֆ1 տեսակի նռնակ, նռնակի պայթուցիչ, տարբեր տրամաչափերի 233 փամփուշտ:

Հիշեցնում ենք, որ ապօրինի պահվող զենք-զինամթերքը կամավոր հանձնած անձինք ազատվում են քրեական պատասխանատվությունից:

ԿՓՈԽՀԱՏՈՒՑՎԻ

Գլխավոր դատախազությունը ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործառույթի շրջանակում 2025 թվականի հունիսի 23-ին կնքել է հաշտության համաձայնություն, որով «Սթոնս» ՍՊ ընկերության ղեկավար Սուրեն Ավագյանն ու նրան փոխկապակցված անձինք պարտավորվել են հաշտության համաձայնությունը հաստատող վճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ շաբաթվա ընթացքում, Հայաստանի Հանրապետությանը փոխանցել 50 միլիոն դրամ, իսկ 37 միլիոն 622 հազար դրամը՝ հաջորդող 12 ամիսների ընթացքում: 2025 թվականի հունիսի 26-ին Հակակոռուպցիոն դատարանի վճռով հաստատվել է վերոնշյալ հաշտության համաձայնությունը:

Հիշեցնենք, որ 2020 թվականի հոկտեմբերի 9-ին Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում սկսվել էր ուսումնասիրություն՝ Սուրեն Պատվականի Ավագյանին պատկանող գույքի առնչությամբ:

2023 թվականի մարտի 22-ին Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության կողմից ներկայացվել է հայցադիմում՝ Սուրեն Ավագյանին պատկանող ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման պահանջով:

2025 թվականի հունիսի 23-ին ներկայացվել է հայցի հիմքն ու առարկան փոփոխելու վերաբերյալ միջնորդություն, համաձայն որի՝ հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձման է ենթակա՝

75 միլիոն դրամ, որը չի հիմնավորվում անձի օրինական եկամուտներով, ունի ապօրինի ծագում, փոխանցվել է բարեխիղճ ձեռքբերողի կամ հնարավոր չէ նույնականացնել եւ բռնագանձել.

347 հազար դրամ՝ որպես տրամադրված փոխառության չվերադարձրած մասի պահանջի իրավունք.

19 միլիոն 985 հազար դրամ՝ որպես ստացված ապօրինի եկամուտների մնացորդ:

Նույն օրը պատասխանողները ներկայացրել են դիմում՝ վարույթը հաշտության համաձայնությամբ ավարտելու ցանկության վերաբերյալ՝ պարտավորվելով Հայաստանի Հանրապետությանը փոխանցել 87 միլիոն 622 հազար դրամ:

ԻՐԱՎԻՃԱԿ

15 ԱՆՁ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ Է

Խուզարկությունների արդյունքում հայտնաբերվել են փողոցում էլեկտրասնուցման եւ համացանցային կապի ապահովման լարերը վնասելու համար նախատեսված մեծաքանակ հրավտանգ առարկաներ. 15 անձ կալանավորվել է:

ՀՀ քննչական կոմիտեի պետության, սահմանադրական կարգի հիմունքների եւ հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչությունում քննվող՝ «Սրբազան պայքար» շարժման ղեկավարների ու մասնակիցների կողմից ահաբեկչության եւ իշխանությունը յուրացնելու նախապատրաստություն կատարելու դեպքի վերաբերյալ քրեական վարույթի նախաքննության շրջանակներում շարունակված խուզարկությունների արդյունքում դարձյալ հայտնաբերվել են մեղադրյալներին մեղսագրված գործողությունները հաստատող իրեր, այդ թվում՝ փողոցում էլեկտրասնուցման եւ համացանցային կապի ապահովման լարերը վնասելու համար նախատեսված մեծաքանակ հրավտանգ առարկաներ:

Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ դատարան ներկայացված բոլոր միջնորդությունները բավարարվել են: 15 մեղադրյալներ կալանավորված են:

ՎԹԱՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Նախօրեին Երեւանում տեղի ունեցած վրաերթի լուրը (մոր եւ փոքրիկի վրաերթը) կայծակնային արագությամբ տարածվեց ու ցնցեց հանրապետությունը: SHAMSHYAN.com-ը բազմաթիվ հեռախոսազանգեր է ստացել քաղաքացիներից, ովքեր հետաքրքրվում էին երեխայի առողջական վիճակով: Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, երեխան եւ մայրը, շնորհիվ Երեւանի «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոնի բուժանձնակազմի, ողջ եւ առողջ են:

Տեղի բժիշկների հոգատար աշխատանքի արդյունքում նրանց կյանքին այլեւս վտանգ չի սպառնում: Մայրը դուրս է գրվել հիվանդանոցից, իսկ աղջիկը մի քանի օր կմնա բժիշկների հսկողության տակ: Ինչպես ավելի վաղ դեպքի վայրից հայտնել էինք վրաերթ-ավտովթար էր տեղի ունեցել Երեւանում: Ժամը 10:30-ի սահմաններում Արցախի Հանրապետության քաղաքացի 20-ամյա Վլադիմիր Ա.-ն իր վարած Kia մակնիշի ավտոմեքենայով Ֆուչիկի փողոցում՝ Մալայանի անվան ակնաբուժական հիվանդանոցի դիմաց գտնվող հետիտոնի համար նախատեսված վայրում, վրաերթի էր ենթարկել հետիոտնային անցումով անցնող 2 հետիտոնի, ապա առաջ ընթացել եւ բախվել կայանված վիճակում գտնվող, Արագածոտնի մարզի բնակիչ 36-ամյա Հրաչ Ա.-ին պատկանող «Opel» մակնիշի ավտոմեքենային:

Վրաերթի ենթարկվածները մայր ու աղջիկ էին, որոնց առաջինը օգնության էին հասել քաղաքացիները, Kia-ի վարորդը, դեպքի վայրի հարեւանությամբ գործող դեղատան աշխատակիցները եւ ըստ դեպքի վայրում հավաքված քաղաքացիների՝ օպերատիվորեն ժամանած Երեւանի 1-03 շտապօգնության բժիշկների հերթապահ խումբը: Վրաերթի ենթարկվածները տեղափոխվել էին «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունիսի 25-ից 26-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 99 դեպք, որից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՏԱՎՈՒՇԻ ԲԵՐԴԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Տավուշ բերդը առաջին անգամ հիշատակվում է 10-րդ դարի սկզբից՝ որպես Աշոտ Երկաթի փոխարքաների նստավայր (հիմնականում Ցլիկ Ամրամի): 10-11-դարերում ամրոցն անցել է լոռեցի Կյուրիկյաններին: Ամրոցը եղել է այն յուրահատուկներից, որը ունեցել է իր ներդաշնակ ջրամատակարարումը: Քանի որ 14-րդ դարից բերդը եղել է լքված. այժմ այն գտնվում է վատ վիճակում: Երկու տարի առաջ այնտեղ հնագիտական պեղումներ են կատարվել, հայտնաբերվել են արժեքավոր գտածոներ: ՀՀ ԿԳՄՍ նախարարության՝ Հուշարձանների պահպանության ծառայության վարչության պետ Հարություն Վանյանից տեղեկացանք, որ կատարված հնագիտական պեղումները հնարավորություն են տվել կազմելու Տավուշ ամրոցի եւ ամրոցի լանջին գտվող փոքր Սուրբ Աստվածածին եկեղեցու ամրակայման եւ վերականգման աշխատանքների նախագիծ: Նախագծով աշխատանքների արժեքը սահմանվել է 186 միլիոն դրամ: Հ. Վանյանը հայտնեց, որ 2024 թվականին՝ 4 անգամ, այս տարի 2 անգամ այդ աշխատանքների համար «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան մրցույթ է հայտարարվել, այդ հայտարարությունը տեղադրվել է համապատասխան ինտերնետային կայքում; Սակայն այդ մրցույթները չեն կայացրել, դրանց մասնակիցներ չեն եղել: Հ. Վանյանը դա բացատրեց այն իրողությամբ, որ ամրոցի եւ եկեղեցու վերականգման, ամրակայման աշխատանքները պահանջում են մասնագիտական հմտություններ, վերականգնողական, ամրակայման աշխատանքներն էլ բարձր, դժվարամատչելի, թեք տեղանքում են: ԿԳՄՍ նախարարությունը մտադիր է, առաջիկայում շինարարական ընկերությունների հետ համագործակցելով, այդ աշխատանքների նոր մրցույթ հայտարարել:

ՍԵԼԱՎԱՋՐԵՐ՝ ՏՈՒՐԻՍՏԱԿԱՆ ԴԻԼԻՋԱՆՈՒՄ

Դիլիջան քաղաքի բնակիչները Ֆեյսբուքում տեղադրել են սելավաջրերից գոյացած 2 ջրվեժների լուսանկար եւ մակագրել՝ «Դիլիջանում բնության նոր հուշարձան է գրանցվել՝ «Ջուխտակ ջրվեժներ»: Այդ գրառման ներքո Դիլիջանի բնակիչները քննադատական մեկնաբանություններ են գրել՝ «Միշտ նույն պատկերն է այդտեղ: Մնում է մի բարերար էլ լինի, նավակներ եւ սուզանավեր նվիրի մեր ծովափնյա Դիլիջանին» , «Գնացեք Մաքսիմ Գորկու (փողոց), անհիշելի ժամանակներից այդ վիճակն է: «Մի քանի տարի է՝ այս հարցով շենքի եւ հարակից տների բնակիչները դիմում են համայնքապետարան»:

Դիլիջանի ՔՊ-ական համայնքապետ Դավիթ Սարգսյանը եւ համայնքապետարանի աշխատակազմն այս խնդրով անգործության են մատնված:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ԱՄՆ-Ն ԽԱԽՏԵԼ Է ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Իրանի՝ ՄԱԿ-ի մշտական ներկայացուցիչ Ամիր-Սաեիդ Իրավանին նամակ է հղել ՄԱԿ-ին՝ մեղադրելով ԱՄՆ-ի կողմից Անվտանգության խորհրդի նիստում հնչեցված մեղադրանքներ: Հիշեցնենք, որ ԱՄՆ-ն հրաժարվեց կատարել ՄԱԿ-ի կանոնադրության 51-րդ հոդվածին՝ արդարացնելով հունիսի 21-ին Իրանի միջուկային օբյեկտների վրա հարձակումները որպես ինքնապաշտպանության գործողություն: Իրանը այս բացատրությունը որակել է որպես «միջազգային իրավունքի եւ ՄԱԿ-ի կանոնադրության կոպիտ խեղաթյուրում»՝ նշելով, որ հարձակումը խախտել է իր ինքնիշխանությունը եւ միջուկային էներգիայի խաղաղ օգտագործման սկզբունքները: «Իրանի միջուկային օբյեկտները գտնվում են ԱԷՄԳ-ի լիակատար վերահսկողության ներքո եւ բազմիցս հաստատվել է դրանց խաղաղ բնույթը», - նշված է նամակում:

Փաստաթղթում հղում է արվում ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 3314 բանաձեւին եւ Միջազգային դատարանի որոշումներին՝ պնդելով, որ կանխարգելիչ ուժի կիրառումը չի կարող համարվել օրինական ինքնապաշտպանություն: Իրանը կոչ է արել Անվտանգության խորհրդի անդամներին մերժել «կանխարգելիչ ինքնապաշտպանության» դոկտրինը եւ դատապարտել ԱՄՆ-ին ու Իսրայելին՝ ՄԱԿ-ի կանոնադրության եւ միջազգային վարքագծի նորմերի խախտման համար: Իրանը նաեւ խնդրել է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին զեկույց ներկայացնել 487 բանաձեւի իրականացման վերաբերյալ, հատկապես ԱԷՄԳ-ի վերահսկողության ներքո գտնվող խաղաղ միջուկային օբյեկտների թիրախավորման առումով:

«Մենք որոշեցինք պատերազմի ելքը». Իրանի զինված ուժերի շտաբի պետի հաղթական ուղերձը «Ոչ մի հուսահատ քայլ չի կարող սասանել իրանցիների եւ զինված ուժերի երկաթե կամքը», - Իրանի զինված ուժերի շտաբի պետ:

Իրանի զինված ուժերի շտաբի պետ, գեներալ-մայոր Աբդոլրահիմ Մուսավին հայտարարություն է տարածել, որում ընդգծել է իրանական ժողովրդի եւ զինված ուժերի հաջողությունը երկրի պաշտպանության գործում:

«Սիոնիստական ռեժիմի եւ ԱՄՆ-ի հարձակումից հետո մեր քաջարի զինվորականները մոբիլիզացրել են իրենց ուժերը՝ ցավալի եւ լայնածավալ պատասխան տալով թշնամուն: Չնայած լայնածավալ մեդիագրաքննությանը, Իսրայելի կողմից բռնազավթված տարածքներում ավերածությունների ապացույցները վկայում են, որ կարեւոր ռազմական եւ հետազոտական կենտրոնները վերածվել են մոխրի», - նշված է հայտարարության մեջ:

«Ինչպես Իրանի Իսլամական Հանրապետության պաշտոնյաները բազմիցս հայտարարել են, Իրանը երբեք չի եղել եւ երբեք չի լինի պատերազմի նախաձեռնողը: Սակայն, եթե որեւէ ագրեսիա ուղղված լինի մեր ազգի տարածքային ամբողջականության դեմ, մենք կորոշենք այդ պատերազմի եւ ներխուժման արդյունքն ու ավարտը»,-հայտնել է նա:

Մուսավին ընդգծել է, որ չնայած ԱՄՆ-ի ուղղակի ներգրավվածությանը եւ արեւմտյան երկրների աջակցությանը՝Իրանի զինված ուժերը կարողացել են կանգնեցնել թշնամու ռազմական հարձակումները՝ հասցնելով նրանց ծանր կորուստներ:

Նա հատկապես նշել է, որ Իրանի հրթիռային եւ անօդաչու համակարգերը հաղթահարել են հակառակորդի օդային պաշտպանության բազմաշերտ համակարգերը: «Ոչ մի հուսահատ քայլ չի կարող սասանել Իրանի ազգի եւ զինված ուժերի երկաթե կամքը»,- հայտարարել է նա:

Հիշեցնենք, որ հունիսի 13-ին Իսրայելը պատերազմ սկսեց Իրանի դեմ՝ հարվածներ հասցնելով Իրանի միջուկային, ռազմական եւ բնակելի օբյեկտներին: Հարձակումների հետեւանքով զոհվեցին հարյուրավոր իրանցիներ, այդ թվում՝ բարձրաստիճան զինվորականներ, միջուկային գիտնականներ եւ խաղաղ բնակիչներ:

Ի պատասխան՝ Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի օդատիեզերական ուժերը իրականացրել են 21 հրթիռային հարված իսրայելական տարածքներում գտնվող թիրախների ուղղությամբ՝«Ճշմարիտ խոստում III» գործողության շրջանակներում:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ՋՈՀԵՐԻ ԵՎ ՎԻՐԱՎՈՐՆԵՐԻ ԹԻՎԸ

Իրանի առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի ղեկավար Հոսեին Քերմանփուրը X սոցիալական հարթակում հայտնել է, որ իսրայելական օդային հարվածների հետեւանքով զոհվել է առնվազն 627 մարդ եւ վիրավորվել 4,870 մարդ: Զոհերի եւ վիրավորների ամենամեծ թիվը գրանցվել է մայրաքաղաք Թեհրանում եւ արեւմտյան Քերմանշահ նահանգում: Զոհերի թվով հաջորդ տեղերում են Սպահան, Մարքազի, Արեւելյան Ադրբեջան, Համադան, Զանջան եւ Գիլան նահանգները:

Քերմանփուրի խոսքով՝

- Զոհերի 86.1%-ը մահացել է հարվածների վայրում:
- 13.9%-ը՝ հիվանդանոց տեղափոխման ճանապարհին կամ ժամանելուց հետո:

Հիշեցնենք, որ հունիսի 13-ին Իսրայելը հանկարծակի պատերազմ սկսեց Իրանի դեմ՝ թիրախավորելով բարձրաստիճան զինվորականների եւ միջուկային գիտնականների, ինչպես նաեւ ռմբակոծելով միջուկային, ռազմական եւ քաղաքացիական ենթակառուցվածքներն ու բնակելի շենքերը Թեհրանում եւ այլ նահանգներում:

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՄԱՍԱՄԲ ՎԵՐՍԿՍԵԼ Է ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Իրանի իշխանությունները վերսկսել են երկրի արեւելյան մասի օդանավակայանների գործունեությունը: Այս մասին հաղորդում է Tasnim լրատվական գործակալությունը: Ըստ Իրանի Ճանապարհների եւ քաղաքաշինության նախարարության խոսնակի՝ երկրի արեւելյան հատվածի օդային տարածքը վերաբացվել է ներքին, միջազգային եւ տրանզիտ չվերթերի համար:

«Քաղաքացիական ավիացիայի կազմակերպության ռազմական եւ քաղաքացիական հատվածների միջեւ համակարգող կոմիտեի որոշման հիման վրա եւ երկրի ներկայիս պայմաններում անվտանգության գնահատումներ անցկացնելուց հետո, օդային երթեւեկությունն աստիճանաբար բնականոն վիճակի վերադարձնելու եւ ավիացիոն անվտանգությունն ու պաշտպանությունը լիովին ապահովելու նպատակով՝ երկրի արեւելյան կեսի օդային տարածքը վերաբացվել է տրանզիտ, ինչպես նաեւ ներքին եւ միջազգային թռիչքների համար», - հայտնել է խոսնակ Մաջիդ Ախուանը:

Հայտարարության համաձայն՝ երկրի հյուսիսային, հարավային եւ արեւմտյան շրջաններում գտնվող բոլոր օդանավակայաններից, այդ թվում՝ Մեհրաբադ օդանավակայանից եւ Իմամ Խոմեյնիի անվան միջազգային օդանավակայանից ներքին եւ միջազգային չվերթեր չեն իրականացվելու մինչեւ հետագա ծանուցում: Իրանի առողջապահության նախարարության ճգնաժամային կառավարման կենտրոնի տեղեկացմամբ՝ Իսրայել-Իրան 12-օրյա հակամարտության սկզբից ի վեր Իրանում զոհվել է 627 մարդ, վիրավորվել՝ 4935-ը: Վիրավորներից 4196-ը բուժում են ստացել հիվանդանոցներում եւ դուրս են գրվել: Հարձակումների հետեւանքով վնասվել է յոթ հիվանդանոց, չորս առողջապահական բաժանմունք եւ 11 շտապօգնության մեքենա: Իսրայելի արտաքին գործերի նախարարության տվյալներով՝հակամարտության հետեւանքով զոհվել է 28 մարդ, վիրավորվել՝ 1,472-ը:

● Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 12 պատահար, 18 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԼՈՒՐԵՐ

6 ԱՄՍՎԱ ԱՐԳԵԼՔ

«ՀՀ-ից Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող երկրներ մի շարք ապրանքների արտահանման ժամանակավոր արգելք կիրառելու մասին» Կառավարության որոշման նախագծով ժամանակավորապես՝ 6 ամիս ժամկետով, արգելք է սահմանվում մի շարք գյուղատնտեսական արտադրատեսակների, այդ թվում՝ ցորեն, մեսլին, գարի, եգիպտացորեն, հնդկացորեն, արեւածաղկի սերմ, արեւածաղկի ձեթ արտահանման նկատմամբ: Այդ մասին որոշման նախագիծը ներառված է Կառավարության նիստերի օրակարգում:

Ըստ հիմնավորման՝նշված ապրանքների մասով ներքին արտադրությունը չի բավարարում ՀՀ շուկայի պահանջարկը, ինչն ապահովվում է հիմնականում ներմուծման ծավալների հաշվին, ըստ այդմ՝ որոշումն ուղղված է ՀՀ պարենային անվտանգության եւ տնտեսության կայունացման ապահովմանը: Նշենք, որ ՀՀ կառավարությունը 2024 թվականի նոյեմբերին ընդունել էր որոշում, համաձայն որի՝ սահմանվել էր արտահանման ժամանակավոր արգելք՝ 6 ամիս ժամկետով, որի գործողությունը կավարտվի 2025 թվականի հուլիսի 4-ին: Սույն որոշման նախագծով առաջարկվում է եւս 6 ամիս ժամկետով երկարաձգել արտահանման արգելքը:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԶՈՐՔԵՐ՝ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԴԵՄ

Հյուսիսային Կորեան կարող է հուլիսին կամ օգոստոսին ավելի շատ զորքեր ուղարկել Ռուսաստան՝Ուկրաինայի դեմ պատերազմում կռվելու համար, Փհենյանը շարունակում է զենք մատակարարել Ռուսաստան, հինգշաբթի հայտնել են հարավկորեացի օրենսդիրները՝ հղում կատարելով հետախուզական ճեպազրույցին:

Ազգային հետախուզական ծառայությունը (NIS) կարծում է, որ Ռուսաստանը, հնարավոր է, պատրաստվում է լայնածավալ հարձակման Ուկրաինայի վրա հուլիս կամ օգոստոս ամիսներին, լրագրողներին ասել է հարավկորեացի պատգամավոր Լի Սոն Կվեունը փակ դռների հետեւում կայացած ճեպազրույցից հետո:

«Լրացուցիչ տեղակայման ժամկետներն այնպիսին են, որ դա կարող է տեղի ունենալ արդեն հուլիս կամ օգոստոս ամիսներին»,-ասել է Լին՝ավելացնելով, որ գործակալությունը իր գնահատման համար հիմք է ընդունել Հյուսիսային Կորեայի՝զորքերի նոր խումբ ուղարկելը եւ Ռուսաստանի նախագահի անվտանգության բարձրաստիճան պաշտոնյայի վերջերս Փհենյան կատարած այցը: Հյուսիսային Կորեայի կողմից Ռուսաստան հրետանային զինամթերք եւ հրթիռներ ուղարկելու դիմաց Փհենյանը, հավանաբար, տեխնիկական խորհրդատվություն կստանա արբանյակների արձակման եւ հրթիռների կառավարման համակարգերի վերաբերյալ, ասել է Լին՝ հղում կատարելով NIS ճեպազրույցին: Ամիսներ տեւած լռությունից հետո Հյուսիսային Կորեան եւ Ռուսաստանը բացահայտել են հյուսիսկորեական զորքերի տեղակայման եւ Կուրսկի մարզը վերադարձնելու համար Ուկրաինայի դեմ Մոսկվայի հարձակման մեջ նրանց դերի մասին տեղեկությունները:

IDBank

ՄԻԱՑԵԼ Է Trade Finance Global-Ի ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ

IDBank-ից տեղեկացնում են, որ բանկի ֆինանսական ինստիտուտների վարչության ղեկավար եւ ICC Armenia-ի գործադիր խորհրդի անդամ Իննեսա Ամիրբեկյանը նշանակվել է Trade Finance Global (TFG)-ի՝ աշխարհի առաջատար առեւտրային ֆինանսավորման հրատարակության խմբագրական խորհրդի անդամ:

Trade Finance Global-ը, ունենալով ավելի քան 160,000 ընթերցող եւ ամսական 7.1 միլիոն օրգանական դիտում, կարեւորագույն հարթակ է առեւտրային ֆինանսների, թղթակցային բանկային գործունեության, միջազգային վճարումների եւ ֆինանսական շուկաների ոլորտներում մտքի առաջնորդության համար: Նորանշանակ խորհրդի անդամները ներկայացնում են ոլորտների, տարածաշրջանների եւ տեսակետների լայն ու բազմազան շրջանակ՝ նպաստելով համաշխարհային ֆինանսների ավելի համապարփակ եւ ներառական լուսաբանմանը:

Խմբագրական խորհրդի առաքելությունն է ապահովել հրապարակված բովանդակության բարձր որակը եւ արդիականությունը՝ հիմնվելով փորձագիտական գիտելիքների վրա եւ հետեւելով ոլորտի զարգացումներին: Առաջատար միջազգային մասնագետներից կազմված խորհուրդը կարեւոր դեր է խաղում առեւտրի եւ ֆինանսների էկոհամակարգում քննարկումների ձեւավորման գործում:

Մեկնաբանելով նշանակումը՝ Իննեսա Ամիրբեկյանն ասել է. «Մեծ պատիվ է միանալ Trade Finance Global-ի խմբագրական խորհրդին, որը հարգված միջազգային հարթակ է՝նվիրված առեւտրային ֆինանսների, թղթակցային բանկային գործունեության, միջազգային վճարումների եւ ֆինանսական շուկաների զարգացմանը: Ես այս հրավերը համարում եմ վստահության կարեւոր նշան՝ ինչպես իմ մասնագիտական անցած ճանապարհի, այնպես էլ IDBank-ի աճող հեղինակության նկատմամբ միջազգային ասպարեզում: Ես անհամբեր եմ զարգացող շուկաներից ստանալ գիտելիքներ եւ աջակցել TFG-ի առաքելությանը՝ ոլորտում լավագույն փորձը զարգացնելու, համագործակցությունը խթանելու եւ միջազգային առեւտրային եւ բանկային համայնքի կապերը ամրապնդելու համար»:

«Trade Finance Global-ում մենք ցանկանում ենք համապատասխանել մեր ստեղծած անվանն ու հեղինակությանը՝ ապահովելով առեւտրի ֆինանսավորման ոլորտի իսկապես համապարփակ եւ գլոբալ լուսաբանում: Այս առաքելությանը համապատասխան՝ մենք ուրախ ենք ավելի սերտորեն համագործակցել Իննեսա Ամիրբեկյանի հետ: Ոլորտում նրա մեծ փորձը եւ տարածաշրջանի մասին բացառիկ գիտելիքները կօգնեն ձեւավորել մեր խմբագրական ռազմավարությունը եւ բարձրացնել Հայաստանի դերը միջազգային առեւտրային դաշտում», ասաց Մահիկա Ռավի Շանկարը, Trade Finance Global (TFG)-ի խմբագրի տեղակալը:

IDBank-ը այս հրավերը համարում է վստահության նշանակալի դրսեւորում թե՛ Իննեսա Ամիրբեկյանի մասնագիտական նվաճումների, թե՛ միջազգային ֆինանսական ոլորտում Բանկի աճող ներգրավվածության եւ հեղինակության նկատմամբ: Նշանակումը արտացոլում է բանկի հանձնառությունը՝ նպաստելու համաշխարհային լավագույն փորձի զարգացմանը եւ ամրապնդելու Հայաստանի ներկայությունը միջազգային ֆինանսական ասպարեզում:

IDBANK-Ը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՁԵՐ ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՁԵՐ ԿԱՆՈՆՆԵՐՈՎ

«Կոնվերս» բանկը բարելավել է ժամկետային ավանդի պայմանները՝ավելի արդյունավետ դարձնելով խնայողությունը: Բանկն առաջարկում է տարեկան մինչեւ 9.75% եկամտաբերությամբ ավանդներ ճկուն պայմաններով եւ Converse Mobile հավելվածով կառավարման հնարավորությամբ: Ձեր խնայողությունները՝ Ձեր կանոններով, Converse Mobile-ում:

Եթե փնտրում եք խնայելու հարմար ապահով եւ ժամանակակից տարբերակ, ապա Converse Mobile հավելվածը լավագույնն է Ձեզ համար: Այստեղ հասանելի են խնայողության հնարավորություններ՝ հարմարեցված յուրաքանչյուր հաճախորդի պահանջներին. ավանդներ ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով կամ Եվրոյով՝ 45 օրից մինչեւ 2 տարի ժամկետով եւ տարբեր պայմաններով: Դուք կարող եք.

ընտրել, թե երբ ստանալ տոկոսագումարը՝ամսական, թե ժամկետի ավարտին

ընտրել ավանդ՝ մայր գումարի համալրման հնարավորությամբ կամ առանց դրա

ներդնել ավանդ՝ մինչեւ ժամկետի ավարտը մասնակի ելքագրման հնարավորությամբ

եւ այդ ամենը մի քանի հպումով՝ անմիջապես Converse Mobile հավելվածում, կամ այցելելով Բանկի ցանկացած մասնաճյուղ:

Ինչպե՞ս սկսել խնայել Converse Mobile-ում

բացեք Converse Mobile հավելվածը

ընտրեք Ավանդներ, + Նոր պրոդուկտ

ընտրեք Ձեզ հարմար տարբերակը եւ լրացրեք անհրաժեշտ դաշտերը:

ԿՍԱՀՄԱՆԱՓԱԿՎԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ

ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի վարչակազմը պլանավորում է սահմանափակել գաղտնի տեղեկատվության փոխանցումը Կոնգրեսին: Պատճառը հունիսի 22-ին Իրանի միջուկային օբյեկտների ռմբակոծման հետեւանքների նախնական գնահատականի արտահոսքն է մամուլ:

Այս մասին հաղորդել է Axios լրատվական հարթակը՝ վկայակոչելով չորս աղբյուրի: «Վարչակազմի աղբյուրները տեղեկացնում են, որ նրանք պլանավորում են սահմանափակել հրապարակումների քանակությունը CAPNET-ում, որը Կոնգրեսի հետ գաղտնի տեղեկատվություն փոխանակելու համար օգտագործվող համակարգ է»,-հաղորդել է լրատվամիջոցը: «Մենք պատերազմ ենք հայտարարում տեղեկատվություն փոխանցողներին»,- Axios-ին հայտնել է զրուցակիցներից մեկը: Դեմոկրատները վրդովմունք են հայտնել այս առնչությամբ՝նշելով, որ գաղտնի տեղեկատվության արտահոսքն անթույլատրելի է եւ պետք է հետաքննվի, սակայն Կոնգրեսին տրամադրվող տեղեկությունների սահմանափակումն անընդունելի է: Հունիսի 22-ին ԱՄՆ-ն հարվածներ է հասցրել Իրանի երեք միջուկային օբյեկտների Ֆորդոյում, Սպահանում եւ Նաթանզում: ԱՄՆ-ի պաշտոնատար անձինք բազմիցս հայտարարել են, որ Իրանի միջուկային ծրագիրն ամբողջությամբ ոչնչացվել է այդ գրոհների հետեւանքով:

Սակայն արտահոսած հետախուզական տվյալները վկայակոչելով՝ ամերիկյան մի շարք լրատվամիջոցներ գրել էին, թե ԱՄՆ-ի ավիահարվածներից իրանական միջուկային օբյեկտները լուրջ վնասներ չեն կրել, եւ Թեհրանը կարող է իր միջուկային ծրագիրը վերականգնել մի քանի ամսվա ընթացքում: ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը եւ նրա վարչակազմը հերքել են այս տեղեկությունները: Պենտագոնի ղեկավար Փիթ Հեգսեթը հայտարարել է, որ հետաքննությունների դաշնային բյուրոն հետաքննում է արտահոսքը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Տեղեկացնում ենք, որ կորել է «Գոգշեն» ՍՊԸ-ի տեխզննման կայանի N ՏՄՏՋ00020 լիցենզիայի ներդիրը:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ՝ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻՆ

ԲԱՑԱՌԻԿ ՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԳՐՔԵՐ

Ջութակահար Մարտին Բազարյանը, որ երկար տարիներ ապրում եւ ստեղծագործում է Կանադայում, պարբերաբար այցելում է Երեւան, որտեղ հանդես է գալիս վարպետության դասերով: Այս անգամ երաժիշտը հայրենիք է վերադարձել մեկ այլ առաքելությամբ. նա Հայաստանի ազգային գրադարանին է հանձնել մի շարք արժեքավոր գրքեր՝ բացառիկ մակագրություններով:

Մարտին Բազարյանն ընդգծեց, որ բոլոր գրքերն իր հոր՝ 1946 թվականին արտերկրից հայերի հայրենադարձության եւ ընդունելության կազմակերպիչ, «Ներգաղթ» կոմիտեի տեսուչ Մովսես Բազարյանի եւ մոր՝ թարգմանչուհի Արտա Բազարյանի անձնական գրադարանից են: «Մայրս անգլերենից հայերեն թարգմանություններ էր անում, իսկ այն տարիներին դա նորություն էր, քանի որ հիմնականում միջնորդ լեզվից՝ ռուսերենից էին թարգմանում, միայն 1950-ականներին սկսեցին բնագրից թարգմանություններ անել: Գրքերը, որոնք նվիրում եմ գրադարանին, մորս եւ հորս են նվիրել հեղինակները: Գրքերի վրա հնարավոր է գրողների յուրահատուկ եւ ջերմ մաղթանքներով մակագրությունները գտնել: Ընկերներս խնդրեցին գրքերն իրենց ժառանգել, բայց ես որոշեցի վերադարձնել հայրենիք»,-նշեց նա:

Վիլյամ Սարոյանի, Էռնեստ Հեմինգուեյի որոշ ստեղծագործություններ առաջին անգամ բնագրից հայերեն է թարգմանել Արտա Բազարյանը: «Երեխա էի, երբ մորս հետ հանդիպեցինք Վիլյամ Սարոյանին: Այդ շրջանի հետ կապված շատ հետաքրքիր հիշողություններ կան: Այդ մեծություններն այլեւս չկան, բայց նրանց գրքերը հավիտենական են եւ պետք է պահպանվեն այս գրադարանում»,-շեշտեց Բազարյանը:

Հայաստանի ազգային գրադարանը Բազարյանի շնորհիվ հարստացավ Սերո Խանզադյանի, Արա Հարությունյանի, Սիլվա Կապուտիկյանի, Վիլյամ Սարոյանի, Էռնեստ Հեմինգուեյի, Արա Սարգսյանի, Օսկար Ուայլդի, Նաիրի Զարյանի եւ այլ ականավոր գրողների, արվեստագետների գրքերով: Գրադարանի տնօրեն Աննա Չուլյանը պատմեց, որ Մարտին Բազարյանի հետ ծանոթացել է կինոռեժիսոր, կինոգետ Գարեգին Զաքոյանի միջոցով: Զաքոյանը Չուլյանին ասել է, որ Բազարյանը ցանկանում է գրադարանին հանձնել Հունաստանի Կավալայի որբանոցի որբերի ցանկերը: Այդպես կայացել է նրանց ծնողությունը: «Ես եւս Հայոց ցեղասպանությունից փրկվածների ժառանգ եմ: Իմ մեծ պապն ու տատը եւս Կավալայի որբանոցներում են եղել: Հուզիչ էր, երբ հայտնաբերեցի, որ հենց այդ ցանկերն են: Մարտին Բազարյանի հայրն առաջին ալիքի հայրենադարձության կազմակերպիչն էր դեպի Խորհրդային Հայաստան, ինչի շնորհիվ Մարտինն ուներ այդ հրատարակությունները»,-նշեց Չուլյանը:

Նա շեշտեց, որ Հայաստանի ազգային գրադարանում չկան ձեռագրեր, սակայն գրադարանը հայատառ տպագիր ժառանգության ամենամեծ պահոցն է աշխարհում: «Մեզ հաճախ են դիմում օտար երկրներում ապրող հայրենակիցներ, որոնք խոստովանում են՝ իրենց սերունդները հայերեն խոսում են, սակայն տառաճանաչ չեն: Մտածում են, թե ինչ է լինելու իրենց գրադարանի հետ: Միշտ ասում եմ, որ Հայաստանի ազգային գրադարանը պատրաստ է ընդունել կարեւոր հրատարակությունները: Կցանկանանք, որ նրանց ժառանգներն իմանան, որ իրենց ընտանիքներից մի կտոր, իրենց պատմությունից մի դրվագ դարերով պահվելու է Հայաստանի ազգային գրադարանում»,-եզրափակեց Աննա Չուլյանը:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՆԴԻՊԵԼ Է ՀՌՈՄԻ ՊԱՊԻ ՀԵՏ

Վատիկանում տեղի է ունեցել հուզիչ հանդիպում. դերասան Ջոնաթան Ռումին, որը հայտնի է «The Chosen» քրիստոնեական հայտնի սերիալում Հիսուս Քրիստոսի դերով, հանդիպել է Հռոմի Պապ Լեո XIV-ի՝ կաթոլիկ եկեղեցու պատմության մեջ ամերիկացի առաջին Պապի հետ: Լուսանկարում Ռումին եւ Հռոմի Պապը ժպտում են, մինչդեռ դերասանը ձեռքին պահում է իր հեռախոսը սելֆիի համար: Հրապարակման մակագրության մեջ Լեո XIV-ը գրել է. «Ամեն անգամ, երբ մենք հավատքի գործողություն ենք կատարում Հիսուսի հանդեպ, մենք ամրապնդում ենք մեր կապը Նրա հետ, եւ Նրա շնորհը անմիջապես իջնում է մեզ վրա: Երբեմն մենք դա չենք գիտակցում, բայց գաղտնի եւ իրական ձեւով Նրա շնորհը թափանցում է մեր մեջ եւ աստիճանաբար վերափոխում մեզ ներսից»: Ռումին խոստովանել է, որ Հռոմի պապի հետ հանդիպումը բացառիկ պահ էր իր համար: «Վատիկանում գտնվելը ապացույց է այն բանի, որ Աստված շարունակում է առաջնորդել մեզ մեր առաքելության մեջ՝ մարդկանց մոտեցնել Քրիստոսին եւ Քրիստոսին նրանց մոտ բերել»,-ասել է դերասանը: «Երբ Լեո XIV-ը ընտրվեց, ես լաց եղա: Ես երբեք չէի մտածի, որ իմ կենդանության օրոք կտեսնեմ ամերիկացու պապական գահին: Եվ հիմա նրա հետ նրա մայրենի լեզվով խոսելը պարզապես անհավանական է»:

ԲՌՆՈՒԹՅՈՒՆ, ԽՈՇՏԱՆԳՈՒՄ

Քաղաքակիրթ աշխարհում պետությունները միմյանց հետ պատերազմելիս ձգտում են հավատարիմ մնալ գրված ու չգրված բարոյական որոշակի օրենքների: Սակայն, երբ գործող իշխանությունների արտաքին ու ներքին քաղաքական նկրտումներն իրագործելու միակ հենարանը դառնում է բանակը, իշխանությունների կամարտահայտիչ զինված ուժերը գործիք են դառնում էթնիկ այլ հանրույթների նկատմամբ հաշվեհարդար տեսնելու համար՝ անգամ խաղաղ պայմաններում: Այս մասին գրում է «Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամը:

Հունիսի 26-ը՝ որպես «Զինված ուժերի զինծառայողների մասնագիտական տոն» նշող ադրբեջանական բանակի զինվորները մշտապես աչքի են ընկել հայ խաղաղ բնակիչների նկատմամբ իրագործած վայրագություններով:

Վերջին տասնամյակներում ադրբեջանական բանակի զինծառայողների կողմից հայ քաղաքացիական անձանց հանդեպ իրականացված բռնությունները պայմանականորեն կարելի է դասակարգել հետեւյալ կերպ. «Խաղաղ» պայմաններում գերեվարված քաղաքացիական անձանց նկատմամբ սպանություններ կամ բռնություններ:

2016 թվականի Ապրիլյան քառօրյա պատերազմի ժամանակ արձանագրված դեպքեր:

2020-2023 թվականներին 44-օրյա պատերազմի եւ դրան հաջորդող ժամանակահատվածում արձանագրված դեպքեր:

Այս դասակարգումը թույլ է տալիս համակարգել եւ ուսումնասիրել տարբեր ժամանակահատվածներում տեղի ունեցած բռնությունների դեպքերը՝ ըստ իրավիճակային եւ ժամանակագրական հատկանիշների:

«Խաղաղ» պայմաններում գերեվարված քաղաքացիական անձանց նկատմամբ սպանություններ կամ բռնություններ:

Ադրբեջանական բանակի զինծառայողները բազմիցս աչքի են ընկել պատահմամբ միջպետական սահմանը հատած անձանց նկատմամբ կիրառած բռնություններով:

Առկա փաստերի ֆոնին զինված ուժերի մասնագիտական ո՞ր տոնն են նշում Ադրբեջանում՝ մարդկանց խոշտանգումների՞, թե՞ անմարդկային վերաբերմունքի...:

ՄԱՐԶԱԿԱՆ

6 ՄԱՐԶԻԿՆԵՐ ԱԶԱՏՎԵՑԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ

Կառավարությունը որոշում կայացրեց մի շարք մարզիկների ազատել շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից: Խոսքը Քրիստիան Լյուսիեն Վիտալի, Վարազդատ Լալայանի, Կարեն Ավագյանի, Նարեկ Դալլաքյանի, Բորիս Շատվերյանի եւ Հայկ Մարտիրոսյանի մասին է: Նրանք արդեն տարկետում ստացել էին մինչեւ 26 տարեկանը լրանալը: Քրիստիան Լուսիեն Վիտալը բասկետբոլի Հայաստանի Հանրապետության հավաքականի կազմում է հանդես գալիս, Կարեն Ավագյանը ծանրամարտ մարզաձեւում, Նարեկ Դալլաքյանը եւ Բորիս Շատվերյանը սամբո մարզաձեւում:

Տրամադրված տարկետումներից հետո նշված մարզիկները նոր նշանակալի նվաճումներ են գրանցել՝ Կարեն Ավագյանը ծանրամարտի երիտասարդների (մինչեւ 23 տարեկանների) Եվրոպայի 2021 թվականի առաջնության հաղթող է՝ 1-ին մրցանակակիր, Նարեկ Դալլաքյանը սամբոյի Եվրոպայի 2023 թվականի առաջնության 3-րդ մրցանակակիր եւ սամբոյի Եվրոպայի 2024 թվականի առաջնության 2-րդ մրցանակակիր է, իսկ Բորիս Շատվերյանը սամբոյի աշխարհի 2023 թվականի առաջնության 2-րդ մրցանակակիր եւ սամբոյի Եվրոպայի 2023 թվականի առաջնության 3-րդ մրցանակակիր է:

Ինչ վերաբերում է ծանրամարտի Եվրոպայի կրկնակի եւ աշխարհի առաջնությունների հաղթող Վարազդատ Լալայանին, ապա նա նախապատրաստվում է 2025 թվականի աշխարհի առաջնությանը: Իսկ Հայկ Մարտիրոսյանը շախմատի Հայաստանի հավաքականի անդամ է:

2 ՄԱՄՆԱԿԻՑ

ՖԻՖԱ-ի աշխարհի ակումբային առաջնության F խմբի երրորդ՝ վերջին տուրում որոշվեցին փլեյ-օֆֆի եւս երկու մասնակից: Դորտմունդի «Բորուսիան» նվազագույն հաշվով առավելության հասավ հարավկորեական «Ուլսան Հյունդայի» նկատմամբ (1:0): Հանդիպման միակ գոլը հեղինակեց Դենիել Սվենսոնը՝ 36-րդ րոպեին:

Դորտմունդի «Բորուսիա»-«Ուլսան Հյունդայ»՝ 1:0:

Գոլը՝ Դենիել Սվենսոն (36):

Այսպիսով՝ Դորտմունդի «Բորուսիան» 1/8-րդ եզրափակիչում կխաղա E խմբի երկրորդ տեղի թիմի, իսկ «Ֆլումինենսեն»՝ նույն խմբի հաղթողի հետ:

ՊԱՏՐԱՍՏ Է ՓՈԽԱՆԱԿՄԱՆ

Թուրինի «Յուվենտուսը» պատրաստ է «Մանչեսթեր Յունայթեդին» աստղային փոխանակում առաջարկել: Այս մասին հայտնում է La Gazzetta dello Sport-ը: «Բիանկոներին» ցանկանում են պայմանագիր կնքել մանկունիացիների անգլիացի հարձակվող Ջեյդոն Սանչոյի հետ եւ պատրաստ են «կարմիր սատանաներին» առաջարկել երկու խաղացողի տարբերակ՝ Դուշան Վլահովիչ կամ Դուգլաս Լուիս: Ավելի վաղ լուրեր էին շրջանառվում, որ 25-ամյա Սանչոն համաձայնել է «Ֆեներբահչեի» առաջարկին:

● Երեւանի Հ. Ղափլանյանի անվ. դրամատիկական թատրոնում հուլիսի 8-ին տեղի կունենա «Երեք ընկեր» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝3000, 4000, 5000, 6000 դրամ:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասեք, թե ում եւ ինչ պայմաններում է տրամադրվում երկարամյա ծառայության կենսաթոշակը:

Սուսաննա Ղազարյան (36 տ., տնային տնտեսուհի)

ՊԱՏԱՍԽԱՆ. Երկարամյա ծառայության աշխատանքային կենսաթոշակ նշանակվում է քաղաքացիական ավիացիայի՝

1) թռիչքաիրամանատարական, թռիչքաիրահանգչական եւ թռիչքային անձնակազմերի անդամներին, բորտօպերատորներին եւ բորտուղեկցորդներին, եթե լրացել է նրանց 45 տարին, եւ նրանք աշխատել են առնվազն 25 օրացուցային տարի, որից առնվազն 20 տարին երկարամյա ծառայության ստաժ է, իսկ առողջական վիճակի պատճառով թռիչքային աշխատանքներից ազատվելու դեպքում՝ եթե նրանք աշխատել են առնվազն 20 օրացուցային տարի, որից առնվազն 15 տարին երկարամյա ծառայության ստաժ է.

2) օդային երթեւեկության կառավարման ծառայության կարգավարի (դիսպետչերի) վկայական ունեցող աշխատողին, եթե լրացել է նրա 50 տարին, եւ նա աշխատել է առնվազն 25 օրացուցային տարի, որից առնվազն 15 օրացուցային տարին անմիջականորեն կատարել է օդային երթեւեկության կառավարման աշխատանք, իսկ առողջական վիճակի պատճառով օդային երթեւեկության անմիջական կառավարման աշխատանքից ազատված անձին՝ եթե լրացել է նրա 50 տարին, եւ նա աշխատել է առնվազն 25 օրացուցային տարի, որից առնվազն 10 օրացուցային տարին անմիջականորեն կատարել է օդային երթեւեկության կառավարման աշխատանք.

3) ինժեներատեխնիկական ծառայության աշխատողին, եթե լրացել է նրա 55 տարին, եւ նա ունի առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն 20 օրացուցային տարին կատարել է երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք տվող աշխատանք:

ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ.» Կենսաթոշակի իրավունք ունեցող անձը կամ նրա օրինական ներկայացուցիչը կենսաթոշակ նշանակելու դիմումը ներկայացնում է անձամբ:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Երեխային ինչպե՞ս է տրամադրվում ծննդյան վկայական: Որո՞նք են ծննդի պետական գրանցման հիմքերը:

Լիլիթ Հովակիմյան (30 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան տեղեկացնում ենք, որ ծննդի պետական գրանցման հիմք են՝

1) Հայաստանի Հանրապետության տարածքի բժշկական կազմակերպությունում տեղի ունեցած կամ բժշկական կազմակերպության կամ բժշկի օգնությամբ, սակայն բժշկական կազմակերպությունից դուրս տեղի ունեցած ծննդի դեպքում՝ ծննդի մասին սահմանված ձեւի բժշկական փաստաթուղթը.

2) օտարերկրյա պետության տարածքի բժշկական կազմակերպությունում տեղի ունեցած կամ բժշկական կազմակերպության կամ բժշկի օգնությամբ, սակայն բժշկական կազմակերպությունից դուրս տեղի ունեցած ծննդի դեպքում՝ ծննդի մասին բժշկական փաստաթուղթը.

3) երեխայի ծննդյան փաստը հաստատող՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը.

4) «Նոտարիատի մասին» օրենքով սահմանված կարգով նոտարի հաստատած իրավաբանական փաստի մասին նոտարական ակտը.

5) օտարերկրյա պետությունում ծնված անձի՝ Հայաստանի Հանրապետություն վերադարձի վկայականը եւ ծնունդը հիմնավորող այլ փաստաթղթեր:

Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ծննդյան վկայականը դիմումատուին տրվում է էլեկտրոնային եղանակով՝ դիմումատուի կողմից նշված էլեկտրոնային փոստի միջոցով կամ թղթային կրիչի վրա:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Երեկ խոշոր ավտովթար է տեղի ունեցել Երեւանում: Արտաշիսյան փողոցում՝ ժողովրդին հայտնի Չարբախի փոսի մոտ, բախվել են Lexus, Tesla եւ Nissan մակնիշի ավտոմեքենաները: Վթարի հետեւանքով 3 հոգի տեղափոխվել են հիվանդանոց:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 6 + 11 +23 + 28
Կոտայքի լեռներ	+ 6 + 10 +23 + 26
Կոտայքի նախալեռներ	+16 + 18 +29 + 31
Գեղարքունիք	+ 7 + 12 +23 + 25
Լոռի	+ 8 + 12 +26 + 29
Տավուշ	+11+ 13 +27+ 30
Արագածոտնի լեռներ	+ 5 + 9 + 22+ 26
Արագածոտնի նախալեռներ	+15 + 18 + 28+ 32

Արարատ	+15 + 18 +29 + 33
Արմավիր	+17 + 19 +33 + 35
Վայոց ձորի լեռներ	+ 6 + 11 +22 + 26
Վայոց ձորի նախալեռներ	+17 + 20 + 32 + 35
Սյունիքի հովիտներ	+15+ 19 +30 + 34
Սյունիքի նախալեռներ	+ 8+ 12 +21 + 24
ԼՂՀ	+14 + 18 +30 + 33
Երեւան	+23+ 25 +29 + 31

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **26.6.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հովսեփյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*